

ալմանախ-ը, պատրաստուած նոյն տա-
րին Երեւանի մէջ եւ հրատարակուած փա-
րիզի «Արազած» ամսաթերթի խմբագրու-
թեան կողմէն: Դարձեալ նկարչական ար-
ուեստի համար հետաքրքրական է իր փե-
ղարու Որմանկարչական Յուշարձանը հա-
տորիկը, տպուած Նիւ Եորք 1942-ին: Ա-
ւելի ուշ 1948-ին Թեհրանի մէջ Քանդա-
կագործուի Այծեմնիկ Ուրարտուի նուիր-
ուած փոքրիկ ուսումնասիրութիւնը, ուր
այդ նշանաւոր արուեստագիտուհիին իս-
կական արժէքը մեզի կու տայ: Նոյն ուղ-
ղութեամբ պրակ մըն է Կրափիկ-նկարիչ
Վանօ Խոջաբէկեանը ներկայացնող պրա-
կը, լոյս տեսած նոյն տարին՝ Թեհրանի
մէջ, եւ 1951-ին ալ՝ ուրիշ պրակ մը նը-
ւիրուած Ժողովրդական նկարիչ Գարրիէլ
Գիւրջեանի:

Մանրանկարչական տեսակէտով կա-
տարած է քանի մը հին արժէքներու յայտ-
նութիւնը: Անոնցմէ է Մանրանկարիչ
Սարգիս Պիծակ-ը, հրատարակուած Պոլիս
1952-ին: Այս ուղղութեամբ ունի բազմա-
թիւ յօդուածներ եւ նոր կատարուած պըր-
պըտումներ:

Իր կարեւորագոյն գործը, սակայն, կը
մնայ Ռուսահայ Թատրոնի պատմութիւ-
նը, ընդարձակ ուսումնասիրութիւն մը ա-
րեւելահայ թատրոնի ծագման՝ պատմա-
կան աղբիւրներու քննութեամբ եւ խղճա-
միտ ու մանրամասն ուսումնասիրութեամբ
հեղինակներու եւ թատերական գործերու:
Այդ գործը կը բերէ ստուգիւ նոր տեսու-
թիւններ եւ նոր յայտնութիւններ: Տպա-
գրուած է Ս. Ղազարի տպարանը 1933-ին,
հատոր մը՝ որ կը բաղկանայ 750 էջերէ,
եւ ճոխացած պատկեր-քիչէներով:

Վենետիկի Միքիթեան տպարանին
մէջ՝ իրմէ լոյս տեսած հատորիկներ են,
յիշատակուելու արժանի՝ Աշուղ Ղուլ
Յովհաննէս, Աշուղ Ամիր Օղլի, Աշուղ Շե-
րաւ, եւն.:

Պր. Արամ Երեմեանի ազգասիրութիւնը
կը կազմէ իր ներքին ոգեւորիչ ոյժը: Հա-

ւաքող մը, համադրող մը անշուշտ ինքը,
բայց խղճամիտ կերպով հետամուտ եղող
փրկելու ինչ որ հայ Ժողովուրդը դարե-
րու ընթացքին արտադրած է իր ծոցէն՝
ըլլան անոնք նկարիչ, որմանկարիչ, ման-
րանկարիչ, կամ աչուղ: Հայկական կու-
սուած արժէքներու ծանօթացումն իր այս
տեսակ փոքրիկ պրակներով, կը նմանի
հայ դրականութեան անդաստանին մէջ
սիրուած փայլուն աստղերու, որոնք կը
ներկայացնեն հայ Ժողովուրդի հոգիէն եւ
մտքէն բխած տաղանդի կամ զգացումի
կայծերը, որոնք երբեք անտեսուելու չեն:
Այդ ջերմ ազգասիրութիւնն է որ մղած է
զինքը Սպահան, Փէրիա եւ Չարմահալ
գաւառներու մէջ ցրուած հայ Ժողովուր-
դին, գաղթական հայ տարրին բերնէն հա-
ւաքելու Ժողովրդական բանահիւսութեան
նիւթեր, ի հարկէ կարեւոր եւ նոյնիսկ
արժէքաւոր, քանի որ կը ներկայացնեն
միշտ մեր Ժողովուրդի հոգեբանութիւնը,
բանաստեղծական թռիչքը, խոհումները,
զգացումները: Չարմահալի Ժողովրդական
բանահիւսութիւնը խորագրով իր պրակը,
տպուած է Վիեննա 1923-ին:

Դարձեալ նոյն ազգասիրութեան մըրդ-
ուած, կատարած է ազգադրական տեսա-
կէտով հետաքրքրական ամփոփումներ
այդ գաւառներուն մէջ ապրող մեր Ժողո-
վուրդին կեանքէն, սովորութիւններէն,
բարքերէն, անոնց բնիկ գոյնով, անոնց
լեզուին յատկանշականով, եւն.: Անոնց-
մէ են օր. Սպահանի Փէրիա գաւառը,
Սպահանի Չարմահալ գաւառը ուսումնա-
սիրութիւնները:

Այսքան եռանդուն եւ արագադիր հրա-
պարակադիրը, ուսումնասէրը սիրով հիւր-
ընկալուած է բնականաբար մեր բոլոր
թերթերու, պարբերաթերթերու խմբա-
գրութիւններէն, հրատարակելով իրմէ
միշտ էջ մը՝ որ լոյս կը բերէ հին անունի
մը շուրջ, կամ կը կատարէ լուսարանու-
թիւններ թուականներու, եւ յայտնու-
թիւններ ծածկուած դանձերու:

Հիմա որ իր բարեկամները եւ համա-
կիրները զնահատելով իր թափած բուռն
ճիգերը բանասիրական եւ դրական մար-
դերու մէջ, 35-ամեայ յոբելեանի մը տօ-
նախմբութեամբ դրուատեցին իր գործը,
վստահ ենք թէ այս հանգամանքը աւելի
եւս ոգեւորութիւն տուաւ վաստակաւոր
մշակին, որպէսզի ինքն ալ տայ մեզի դեռ

իրմէ սպասուածը, եւ կատարէ հայ մը-
շակոյթի անդաստանին համար օգտակար
իր մեղուական տքնութեամբ հաւաքուած
դեռ ուրիշ բազմաթիւ նիւթերու յայտնու-
թիւններ: Կը մաղթենք առողջութիւն եւ
կորով:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

ԼՈՅՍԻՆ ՄԷՁ ԼՈՅՍ

Բոլոր տարրերն երկրագունդիս՝
Շընչող, անշունչ, իմանալի կամ ըզզալի,
Տես, իրարո՛ւ կը նմանին,
Կամ իրարո՛ւ են յուշարար:
Թիթեռնիկի կը նմանի ծաղիկը հե՛ղ,
Յօղն արցունքի՛ն կը նմանի,
Ծովն՝ երկընքին,
Բուրդը՝ լեռան,
Եւ երազի՛ն կը նմանի երգը անմա՛հ:

Բայց ո՞վ քեզի կը նմանի,
Լոյս անմատոյց,
Ի լուսոյ Լո՛յս,
Որ հաճեցար իջնել երկիր,
Սէրը անհո՛ւն քարոզեցիր,
Ըրիր պայծառ՝ անդունդը խոր,
Սըրտերը ո՛րք ջերմացուցիր,
Դուն, էութի՛ւն ամենագեղ,
Եւ տըգեղին տըւիր համբոյր,
Դուն, մեծազօր Արարչութիւն,
Տըկարն յետին պաշտպանեցիր,
Պահ մը, յանկարծ,
Թոյլատրեցիր որ մութն անա՛րգ
Խուժէր վըրադ,
Ուղեկորոյս
Թաւալեցաւ դունդը երկրիս
Տարածութեան մէջ անսահման,
Բայց ծագեցար դուն վերլստին,

Ո՛վ Արեգակ Արդարութեան,
Շուրջդ՝ ընթացքի՛ն մէջ պահեցիր
Մոլորակն հին:

Ո՞վ, ո՞վ քեզի կը նմանի.
Ո՛չ էակն այն՝
Որ հառաչեց վէրքը սըրտին,
Եւ տըրտընջաց եւ բողբոջեց,
Սուրը բախեց ընդդէմ սուրին,
Ատենական
Կեանքը կարծեց յաւերժատեւ,
Ակութը տաք որոնեց ան,
Եւ պատմութեան հօրեական,
Հանգիստը միշտ, եւ դափնինե՛ր:

Կը նմանի քեզի միայն՝
էակը այն,
Որ յարաժամ վէրքը սըրտին՝
Ձքեղ օրհնե՛ց,
Ատելութեան դէմ ամհհի
Սէրը պարզեց, կարմիր դըրօշ,
Բարձունքներու վըրան ազատ,
Բացաւ սիրտն իր՝ Արեգակին,
Լոյսն ըզգեցաւ,
Երգը մեկնեց թռչուններուն,
Ծաղիկներուն հետ խօսեցաւ,
Հըսկեց անդուլ,
Քալեց փուչէ պըսակն ի գլուխ,
Անցաւ ծովեր, ովկիանոսներ,
Եւ երկիրներ ճանչցաւ բազում,
Քեզ քարոզեց ընտրեալներուն,
Ժողովուրդներ հանեց ոտքի,
Մէջէն ցայլին

Տարաւ զանոնք բարձունքդ անհաս,
Ամէնուրեք Բեզ որոնեց,
Իր մատներով ոսկորացած,
Աչքով տըկար, հողով անհուն,
Ձքեղ դըրկեց
Վարդահեղեղ լոյսերուն մէջ,
Ձորձը պատուած, ոտքն արիւնոտ,
Լոյսին մէջ լոյս:

ՀՐԱԶ ՔԱՋԱՐԵՆՑ

24/ՓԲ/54

~ ~ ~

ՆՈՐԱԳՈՅՆ ԵՐԳԵՐ

ՀԱՄԱՌՅՐ ՄԱՍՈՒՆՔՆԵՐՈՒՆ

Կը համբուրեմ հողը օտար,
Ուր կը հանգչի մասունքը ձեր,
Ո՛վ տարաբախտ իմ եղբայրներ,
Որ կարօտով ինկաք ի սպա՛ռ:

Բեկոր մ'եղաւ Հայրենիքի՝
Ձեզմէ մէջ մին, Երկրիս վըրան,
Բընակարա՛ն եւ գերեզման՝
Երկիրն ամբողջ ըրի՛ք ձեզի:

Սըփոնցիք դուք զոյգ ամբերո՛վ
Ձեր ծաղիկները Մայիսի,
Վերածեցիք մութը լոյսի՛,
Վէրքը՝ երգի՛ սիրազորով:

Դուք ցըրուեցաք երկրիս վըրան,
Ո՛հ, քաղցիք դուք ծաղէ ծաղ,
Բայց ոլորտին մէջ միացաք՝
Փողփողենէջ, յաւերժակա՛ն:

ՀՐԱԶ ՔԱՋԱՐԵՆՑ

24/ՓԲ/54



ԶԷՆՔԻ ՏԱԿ

ՔԱԹԻՒՇԱՆ

1942 Ձատիկ: Ալեքսիս Լազարեւիչ բա-
րեկամս զիս հրաւիրած է իր տունը: Լա-
զարեւիչը ինձմէ տասնեւհինգ տարի աւելի
մեծ է: Գեղեցիկ մարդ մըն է Լազարեւի-
չը. բարտիի պէս ուղիղ, ծանրաբարոյ եւ
սակաւախօս: Կատակաբան ալ է: Այս
պարագան շաղախն է մեր բարեկամու-
թեան եւ մտերմութեան:

Սեղանին վրայ ամէն ինչ Արեւելքը կը
խիչեցնէ. մեր Արեւելքը. հոնտեղի հողն ու
արեւը, հոնտեղի ծառերը, եւ այդ ծառե-
րուն տակ վազող ջուրերը: Հաւկիթները
ճերմակ են, կանաչ ու կարմիր: Սեղանին
վրայ, ապուխտն ու ձիթապտուղը դրա-
ւած են իրենց պատուոյ տեղը:

Լազարեւիչի կինը անոյշ կին մըն է.
դեռ երիտասարդ. սեւ մազերով եւ սեւ
յօնքերով: Լազարեւիչի աղջիկներն ալ աղ-
ուոր են: Ես անոնց իտալերէն կը սորվե-
ցընեմ, եւ անոնք ինձի կը սորվեցնեն տե-
ղական լեզուն եւ տեղական պարերը:

Կէսօրուան կերուխումէն վերջ՝ Լազա-
րեւիչն ու ես այցելութեան պիտի եր-
թանք. տիկին Փաւլովնան մեզի կը սպա-
սէ: Տիկին Փաւլովնան արդիական դեղե-
ցիկ տուն մը ունի: Քառասուն տարեկան
է եւ այրի: Կ'ապրի իր երկու աղջիկներուն
հետ: Մէկզմէկ հասկնալու համար հինգ
լեզուով կը խօսինք:

Շաբաթը զէթ անդամ մը հիւր եմ այս
բարի եւ ազնիւ տիկնոջ: Նատիան, կրտսեր
աղջիկը, կը սիրէ համազգեստս, Ալպեան
թնդանթածիգ սպայի փետրաւոր գըլ-
խարկս: Սորվեր է իտալերէն քանի մը նա-
խադասութիւն, եւ զանոնք կը գործածէ
մեծ ճարտարութեամբ: Սորվեր է նաեւ
իտալական բանական աստիճանաւորման
դասաւորումը: «Սորտաթոյ», «Քափորա-

լէ», «Քափորալ Մաճճիորէ», «Սերճեն-
թէ», «Սերճենթէ Մաճճիորէ»...

Բայց, ո՛ւր է Քաթիւշան. ինչո՞ւ զայն
հիւրասրահ տեսնելու առիթը չեմ ունե-
նար երբեք:

Երբ, առօրեայ պարտականութիւններէս
ձերբազատուած, կ'երթամ Փաւլովնանե-
րուն այցելութեան՝ կ'անցնիմ բակ-պար-
տէզէն, ուր կը ծաղկի նշենին, որուն տակ
միշտ նստած կ'ըլլայ Քաթիւշան, անտար-
բեր, բացակայ կեանքէն եւ աշխարհէն,
դիտելով երկինքը, աղատ եւ անկախ, լե-
ցուն արեւով եւ հովով:

Քաթիւշան երբեք չի բարեւեր զիս: Զի
բարեւեր ոչ մէկ սպայ, չի բարեւեր նոյն
խակ Ալպեան ռազմիկներուն վաթսուեամ-
եայ հրամանատարը: Միշտ լուռ է, մը-
տածկոտ, բացակայ կեանքէն եւ աշխար-
հէն:

— Տիկին Փաւլովնա, ինչո՞ւ Քաթիւ-
շան միշտ է միշտ, սիրահարուած է ար-
դեօք:

Տիկին Փաւլովնա չի պատասխաներ:
Ի՞նչ ըսէ, խեղճ կնիկը. կը տեսնէ իր սի-
րասուն զաւակը որ կը նիհարնայ, որ կոր-
սընցուցեր է իր քսան տարիներուն դուար-
թութիւնը: Յիրաւի, ի՞նչ ըսէ, խեղճ կը-
նիկը...: Ամէն օր նոր ցաւ, նոր կուլ եւ
նոր մահեր: Թեքեւս, սիրահարուած ալ է:
Ի՞նչ դիտնայ, խեղճ կնիկը...:

— Տիկին Փաւլովնա, ինչո՞ւ կու լաք,
ի՞նչ է պատահեր:

— Երեք օրէ ի վեր Քաթիւշայէն լուր
չունիմ. երեք օրէ ի վեր ձեզի կը սպասէի:

Կ'անցնին շաբաթներ. Քաթիւշայէն
լուր չկայ:

Տիրութիւնը իջեր է Փաւլովնաներուն
տան վրայ: Տիկինը հիւանդ է, փոքր աղ-
ջիկը տխուր, ամէն ինչ մութ է հիմա ա-
նոնց շուրջ. նշենին տակ չկայ Քաթիւ-
շան, քսանամեայ Քաթիւշան, որ բացա-
կայ էր կեանքէն եւ աշխարհէն, որ երբեք

չէր բարեւեր զիս, որ երբեք չէր բարեւեր
իմ զինակից ընկերներս:

Գիշերուան ժամը չորսին, Օգնական
զինուորս զիս կ'արթնցնէ:

— Պարոն բժիշկ, հագուեցէ՛ք շուտով,
պիտի մեկնինք: Ապստամբները կը մօտե-
նան մեր դիրքերուն. պէտք է ընդառաջ
երթալ անոնց...

Գիշերուան մութին մէջ ջորիները կը
տքան, իրենց ամբակներով ծեծելով հողն
ու ժայռերը: Լեռնային թնդանթածիգ-
ները իրենց հուժկու բազուկներուն վրայ
ստած մեր թնդանթներուն կտորները՝
զանոնք ճարտարութեամբ կը տեղաւորեն
անասուններուն մէջքին եւ կողերուն:
Սպաները կը շրջին ջղային եւ անհան-
դարտ: Անոնք, շատ լաւ դիտեն թէ ի՞նչ
ըսել է արթննալ գիշեր ատեն, ընդառաջ
երթալ Մոնթենեկրոյի ապստամբներուն:

— Պարոն բժիշկ, չմոռնաք հականե-
խիչներ առնել... վէրքերս լաւ խնամե-
ցէ՛ք... կեանքի եւ մահուան սահմանադի-
ժը յաճախ երակ մըն է միայն... պարոն
բժիշկ, չմոռնաք հականեխիչներ առ-
նել...:

Սերճոն է. սովորականին պէս կը կա-
տակէ:

Կը հագուիմ շուտով: Դեղատուփերս
պատրաստելէ առաջ՝ կը քննեմ ատրճա-
նակս եւ ուսնկախ թեթեւ զնդացիրս:

Գիշերուան մէջ կը քալեն ջորիները: Իմ
խումբիս առջեւէն, կոնակէն, աջէն եւ
ձախէն կը յառաջանան Ալպեան զինուոր-
ները: Լեռներուն վրայ անտառները լուռ
են: Լուռ է երկինքը. մեր աջակողմեան
լեռնաշղթային վերեւ լուսինը նշխարի
պէս է:

Առաւօտեան ժամը վեցին կը լսուի ա-
ռաջին զնդակը, ապա երկրորդը, երրոր-
դը...

— Վա՛ր առէ՛ք թնդանթները, դիրք
ընեցէ՛ք... ո՛չ ոք կորսնցնէ իր հանդար-
տութիւնը... վա՛ր առէ՛ք թնդանթնե-
րը...: